

եւ կամ դասախօսները ի՞նչ նիւթ նկատի ունէին, դժբախտաբար չեն հաղորդած ժամանակակիցները: Բայց ուշագրաւ են այս տեսակէտէ Դաւրիժեցւոյ տողերը (էջ 255), երբ կը գրէ. «Մինչեւ ցայս վայր տգիտութեամբ խոսանացեալ եւ կորուսեալ էր ազգս Հայոց. եւ ոչ միայն ոչ ընթեռնուին, այլ եւ ոչ զգիրս գիտէին եւ ոչ զգօրութիւնս գրոց. վասն զի անպիտացեալ էր գիրքն յաչս մարդկան. եւ իբրեւ զկոճեղս փայտից անկեալ յանկեան ուրեք՝ լցեալ հողով եւ մոխրով: Եւ իբրեւ սօրա (անապատաւորք) մտին ընդ լծով ծառայութեան առաքինի գործոց՝ յօժարութեամբ ընթեռնուին զգիրս եւ կամակար մտօք կրթէին զինքեանս». իսկ առաջնորդութեամբ վերոյիշեալ ուսուցիչներու «սկսան յընթերցմանէ եւ յուսուցանելոյ գրոց վերստին նորոգել եւ յարդարել զամենայն կարգս բարիս անապատաց եւ վանօրէից եւ ժամատեղեաց»:

Պիտի հետեւցնենք ասկէ, թէ ուսմանց գլխաւոր առարկաններն էին՝

ա. Գրչութեան արուեստը.

բ. Ժամասացութիւն.

գ. Հին եւ Նոր Կտակարանի բացատրութիւնը:

Բայց յառաջագէտ աշակերտներուն կ'աւանդուէր նաեւ «արտաքին գրոց» ուսումը:

Իսկ դասախօսութեանց համար ընդհանրապէս կը վերցնէր իւրաքանչիւր ուսուցիչ որոշ թուով աշակերտներ եւ կը հրահանգէր